

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ**ՍԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ**

7-8րդ դար

3.

ԵՐԱԺՇՏԱԳԻՏ ՍԱՀԱԿ ԶՈՐԱՓՈՐԵՑԻ

7րդ դարի վերջին և 8րդի առաջին շրջանի հայ երաժշտության վաստակավոր մշակներից մեկն է Սահակ Զորափորեցին, իր ժամանակի հայոց կաթողիկոսը:

Նրա մանկության շրջանի պատմության էջերը յայտնի չեն: Պարզ է միայն այն, որ նա իր ուսումնի ստանում է Արագածոտն գաւառի Տեղերի (այժմ Դըղըր գիւղը) «Ս. Աստուածածին վանքում», որ իր ժամանակի մշակութային լուսավորչ օջախներից մեկն էր: Այնտեղ գիտնական վարդապետներն ուսուցանում են և դաստիարակում վանքի ընդունակ, առաջադեմ աշակերտներին և ժողովրդին նուիրում կրթութեամբ, լուսավոր և զարգացած հոգևորականներ:

Մենաստանի ամենազիտուն և նշանավոր հոգևորականը «Քոթեհաւոր» կոչուած Թէոփորոս վարդապետն էր, վանքի վանահայրը, որի մօտ Սահակ Զորափորեցին ուսանում է և հետզհետեւ խորանում ժամանակի գիտութեան մէջ և մշակում իր հոգում թագնուած երաժշտական ձիրքը: Վանքումն էլ նա հոգևոր կոչում է ստանում, իսկ Իսրայէլ կաթողիկոսի մահից յետոյ ընտրւում է կաթողիկոս և ամբողջ 26 տարի, հաւատարիմ մնալով իր վեհ կոչմանը, անձնըւիրաբար, բարեխղճօրէն և պատուով կատարում է իրեն վստահուած հայրապետական ծանր և պատասխանատու պարտականութիւնը (677-703):

Ուշագրաւ է և այն, որ Զորափորեցու կաթողիկոսութեան առաջին տարիներում կրկին սկսւում է մտերմական յարաբերութիւն աղուանների և հայերի մէջ, որ վաղ ժամանակից ընդհատուել էր:

Սակայն, 684 թուին, նրա կաթողիկոսութեան 7րդ տարում, Հայաստան են ար-

շաւում խաղիրները և մեծ աւերումներ գործում: Այդ ժամանակ պատերազմում սպանւում է Գրիգոր Մամիկոնեան իշխանը: Հայ ժողովրդի խոհեմ, իմաստուն և շինարար այն իշխաններից մէկն է նա, որ թաղմամեայ կառավարութեան ժամանակ Հայաստանը խաղաղութիւն է վայելում: Այդ շրջանում ահա նա կառուցել է տալիս Արուճի փառաւոր եկեղեցին և Եղուարդի մօտ մի վանք:

Այնուհետեւ, հայ ժողովրդի համար սկսւում են դառնութեան տարիներ: Դատարական արշաւանքի և յունական տիրապետութեան մօայլ ժամանակաշրջանն է: Եռստինիանոս Բ. կայսրը կամենալով Հայաստանն իրեն հպատակեցնել, 686 թուին, Ղենդիթոս զօրավարին ահազին բանակով Հայաստան է ուղարկում: Նա տիրում է ամբողջ երկրին, մեծ թաղմութիւն է կոտորում և մի մասն էլ գերեվարում: Այնուհետեւ հայ ժողովուրդն ապրում է նորից դառն օրեր: Արաբները մի քանի անգամ արշաւում են Հայաստան և աւերում քաղաքներն ու գիւղերը: Հայ իշխաններն ստիպուած հպատակութիւն են խոստանում: Այդ հանգամանքը, սակայն, սաստիկ զայրացնում է յունաց կայսեր՝ Եռստինիանոսին, որ 689 թուին ահազին բանակով մտնում է Հայաստան, իր մօտ կանչում վրաց, աղուանից ու հայոց իշխաններին և սպառնալիքով հպատակութեան խոստում առնում: Մի քանի օր իր մօտ է պահում Սահակ Զորափորեցի կաթողիկոսին և մի քանի այլ եպիսկոպոսներ, ապա պատանդներ վերցնելով վերադառնում է Պոլիս:

Երեք տարի յետոյ տեղի են ունենում քաղաքական նոր դէպքեր: 692 թուին արաբները Կիլիկիայում յոյներին չարաչար պարտութեան են մատնում, իսկ յաջորդ տարին մտնում են Հայաստանի կենտրոնական քաղաքներն ու գիւղերը, ժողովրդին կոտորում, ծանր հարկերով ճնշում և գերեվարում: Ահա այդ մօայլ և ծանր տա-

րիններին Զորափորեցիին իր լաւագոյնը գործադրում է, որպէսզի հայ ժողովուրդը կոտորածից փրկուի: Սակայն, ժողովրդասէր ու հայրենասէր հայրապետն շուտով խիստ հալածանքի է ենթարկւում: Յոյնե-րի Յուստինիանոս կայսեր հրամանով նա, հինգ եպիսկոպոսների հետ միասին, կալա-նաւորւում է: Այդ ժամանակ Դուինում հաստատւում է Արդլլա արար զօրապետը: Նա յունասէր հայ իշխաններին և Սահակ Զորափորեցիի կաթողիկոսին չղթայակապ ուղարկում է Դամասկոս: Այդ հալածանքից փախչում են միայն Ներսէս կամսա-րականն ու Սմբատ Բագրատունի իշխան-ները, որոնք դիմում են յունաց օգնու-թեանը: Յուստինիանոս կայսեր հրամանով Դեռնոպոս զօրավարը մտնում է Դուին և այրում Արդլլայի ու նրա մեծամեծների տները, իսկ 694 թուին, Վարդանակերտի մօտ, յունական զօրքը և հայ իշխանները սաստիկ ջարդում են արաբներին և մնա-ցածներին Հայաստանից դուրս քշում:

Այդ թուականից անցնում են ամբողջ 7 տարիներ և ահա 702 թւին, արաբները, Մոհմատի առաջնորդութեամբ, կրկին մըտ-նում են Հայաստան: Շուտով տեղի է ու-նենում Վանանդի պատերազմը, որի ըն-թացքում Ներսէս կամսարականն ու Սմ-բատ Բագրատունին յաղթում են Մոհմա-տին, բայց արաբ ամիրապետի հրամանով Մոհմատն ահազին բանակով նորից արշա-ւում է Հայաստանի վրայ, որպէսզի խըս-տիւ պատժէ յունասէր հայ իշխաններին: Այդ ծանր կացութիւնից ազատուելու հա-մար հայ իշխաններն արաբական հպտա-կութեան մի թուղթ են ստորագրում և Սա-հակ Զորափորեցու հետ ուղարկում Մոհմա-տին, որպէսզի իրենց կոտորածից ազատէ: Ժողովրդասէր հայրապետը նոյնպէս Մոհ-մատին մի աղերսալիք է գրում, որի մէջ հանգամանքէն բացատրում է, որ հայերը ո՛չ թէ իրենց ցանկութեամբ, այլ ճնշումով միայն յոյներին հպատակել են: Ընդգծում է նաև, թէ հայ իշխաններն ամիրապետին իրենց հպատակութիւնն են յայտնում: Վեր-ջում աղերսում է խղճալ հայ ժողովրդին, որը պատրաստ է հնազանդութեամբ և հը-պատակութեամբ արաբներին ծառայել:

Վշտահար Զորափորեցիին աղերսալիքն առած՝ իր աքսորավայր Դամասկոսից դի-

մում է Մոհմատին, բայց չի կարողանում զօրապետին տեսնել: Ճանապարհին, Խա-ռան քաղաքում, ծանր հիւանդանում է և վախճանւում: Մահից առաջ նա պատուի-րում է զազաղի մէջ իր ձեռքում գնել ա-ղերսագիրը: Նրա մահուան լուրը հասնում է Մոհմատին: Երբ նա հայոց կաթողիկոսի ընդառաջ գալու և աղերսագրի մասին տե-ղեկանում է, նրան տեսնելու նպատակով գալիս է Խառան: Եւ երբ մօտենում է դա-զաղին, Զորափորեցուն ողջունում է որ-պէս ողջ մի հոգեւորականի: ապա կարգում է նրա ձեռքում պահած թուղթը և ցայ-տուն գաղափար է կազմում յոյների կող-մից հայ իշխանների ու ժողովրդի վրայ գործադրուած ճնշումների և հալածանք-ների մասին: Այդ ժամանակ հրամայում է Զորափորեցուն Հայաստան փոխադրել և թաղել: Յարգում է նաև հայ իշխանների և կաթողիկոսի աղերսագիրը, որով առանց աւերածութեան և արիւնահոսութեան 703 թուին մտնում է Հայաստան և բովանդակ երկրին տիրում:

Զորափորեցու գրած աղերսագրի բու-վանդակութիւնը, դժբախտաբար, չի հասել հայ զրականութեան պատմութեանը, բայց նրանից մնացել են մշակութային այլ էջեր, որոնք այսօր մեզ ցայտուն գաղափար են տալիս նրա երաժշտական արուեստի և հրա-տմութեան մասին: Դրանք նրա յօրինած շարականներն են, նուիրուած եկեղեցուն և խաչին: Դրանցից առանձին ուշադրութեան արժանի է «Էջ Միածինն ի Հօրէ՛» խորա-գրով շարականը՝ որ պատկերում է հետե-կալ նկարը.

«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա,

Ձայն հնչեցին սանգարամեք անդնդոց.
Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
Պատմեք ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Սկա՛յք, շինեսցուք, սուրբ զխորանն լուսոյ,
Քանգի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաս-
տան աշխարհի»:

Այս պատկերաւոր և գեղեցիկ շարա-կանը Զորափորեցին յօրինել է Գրիգոր Լու-սաւորչի տեսիլքի համաձայն: Նա հրաշա-փառ լոյսը տեսնում է և ցնծութեամբ պատմում հաւատացեալ արքային: Լոյսը տարածւում է իջման տեղի վրայ և շուրջը:

Այդտեղ էլ շինում են մի փոքրիկ խորան՝ չորս սիւն միմեանց հետ խորանածն կամարներով կապուած և վրան մի գմբէթ:

618 թուին դրա վրայ կառուցուում է էջմիածնի խորանածն մեծ տաճարը:

Նշենք և այն, որ էջմիածնին նուիրւած զեղեցիկ շարականն այսօր Սահակ Զորափորեցու պայծառ անունը վառ է պահում երաժշտասէր հայ ժողովրդի սրտում:

Նրա մի այլ զեղեցիկ յատկութիւնը ձայնական արուեստն է: Իր դարաշրջանում նա հանդիսացել է նաև շարականների լաւագոյն երգիչը:

Նոյնպէս Զորափորեցու գրչին է պատկանում Ծաղկազարդի մասին գրած մի ճառը՝ որ յօրինել է 7րդ դարի հետտորական ոճով:

1.

ԵՐԱԺԵՏԱԳԷՏ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԷՐ

ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՅԻ

Յովհան Օձնեցու կեանքի պատմութեան էջերը մեզ տանում են 7րդ դարի վերջին և 8րդի առաջին շրջանը: Իր ժամանակի ամենանշանաւոր և բացառիկ հոգեւորականներից մէկը, որ յայտնի է դառնում որպէս տաղանդաւոր հոգեւոր, հմուտ աստուածաբան, լաւագոյն տրամաբանող ու վերլուծող: Այդ արժանիքների շնորհիւ էլ նա լիմաստասէր կոչուեց և ստանում:

Նրա ծննդավայրն է Օձուն գիւղը, ուր մի հարուստ ընտանիքում սնւում է և մեծանում: Ուսանում է և կրթւում Տեղերի «Ս. Աստուածածին» վանքի վանահայր և 7րդ դարի նշանաւոր վարդապետ Թէոդորոս Բաթնեաւորի մօտ, ուր իր սիրելի գասընկերն էր Սահակ Զորափորեցին: Այնուհետև վարդապետական կոչման է նուիրւում:

Ժամանակի Արճիշեցի եղիա կաթողիկոսը, բարձր գնահատելով նրա մտաւոր լուրջ պատրաստութիւնը և բարեմասնութիւնները, իր հետ տանում է Աղւանից երկիրը, ապա Արագածոտն գաւառի եպիսկոպոս ձեռնադրում, իսկ եղիա կաթողիկոսի մահից յետոյ նստում է հայրապետական աթոռի վրայ (718-728)՝ և ձեռնահասօրէն ու իմաստութեամբ վարում է եկեղեցական գործերը:

Զեապիր յիշատակարաններն Օձնեցուն

նկարագրում են պարթևահասակ, թիկնեղ ու զեղեցկադէմ, իսկ բնաւորութեամբ առաքինի, համեստ և խաղաղասէր: Նա արտաքուստ հազնում է շքեղ, մօրուքի վրայ ոսկեփուշի է ցանում, իսկ ներքեւում, մերկ մարմնի վրայ, քուրձ կրում:

Նշենք և այն, որ Յովհան Օձնեցու եկեղեցական գործունէութեան տարիները զուգահիշում են արաբական դաժան լծի և ծանր հարկատուութեան շրջանին:

Դա ա՛յն անմխիթար պատմաշրջանն էր, երբ Հայաստանում առաջ են գալիս բազմաթիւ աղանդաւորներ — Եզրի հետեողները, Պաւլիկեանները, Պատկերամարտիկները, Երեւութականները և ուրիշներ, որոնց հիմնական կենտրոնը հանդիսանում է «Չրկա» կոչուած վայրը: Նրանց կանչում են ճարտարգիրք և «Եզրիտիք», որոնք Հայ Եկեղեցու ներսում երկպառակութիւն և ազգի մէջ փոխադարձ ատելութիւն սերմանելով՝ թունաւորում են հայ ժողովրդի և հոգեւոր դասի խաղաղ կեանքը:

Եւ ահա Յովհան Օձնեցու համար սկսում է պատասխանատու և դժուարին գործունէութեան մի շրջան: Բայց նա իր իմացական շրջահայեցողութեամբ, իր գիրքով ու հեղինակութեամբ մաքրում է Հայ Եկեղեցին օտարոտի և հիւանդագին երեւոյթներից:

Նա դեռ վարդապետ ու եպիսկոպոս՝ թէ՛ խօսքով և թէ՛ գրչով պայքարում է կրօնական տարբեր ուղղութիւնների դէմ: Այդ շրջանում էլ նա գրում է իր երկու նշանակալից ճառերը, մէկը Յուլիանոս Ալիկաոնացուն հետեող աղանդաւորների դէմ՝ «Ճառ ընդդէմ Երեւութականաց», միւսը՝ «Ճառ ընդդէմ Պաւլիկեանց», որոնցով նա լուրջ տրամաբանութեամբ հերքում է աղանդաւորների անմիտ և անհիմն կարծիքները, միաժամանակ պատմական տեղեկութիւններ է տալիս հայ հաւատացեալ համայնքներում տեղ գտած աղանդների մասին:

Նշանակալից է այն, որ կաթողիկոս ընտրուելուց յետոյ՝ իրեն յատուկ հետեւողականութեամբ ու վճռականութեամբ էլ աւելի ուժեղ պայքար է ծաւալում աղանդաւորների դէմ, իսկ նրանց անկարգութիւններին վերջ տալու համար 719 թուին գումարում է Դուինի 7րդ ժողովը, ուր մի

ընդարձակ և գեղեցիկ ատենաբանութեամբ նկարագրում է Հայ եկեղեցու տիտուր վիճակը և շեշտում բարեկարգելու կարիքը:

Այդ ժողովումն էլ նա սահմանում է և հաստատում 32 յօդուած — կանոններ, բայց նա միայն նոր կանոնադրութեամբ չի բաւականանում: Առաջին անգամ լինելով խմբագրում է Հայ եկեղեցու կանոնագրքը:

Ուշագրաւ է մի այլ երեւոյթ: Դուրի ժողովից մի տարի յետոյ Օմար Բ. ամիրապետը (717—720) լսելով Օձնեցու բարեմասնութիւնների մասին, նրա հրաւիրում է Դամասկոս: Բարեխորտ և բարեպաշտ ամիրապետը, երբ տեսնում է կաթողիկոսին շքեղ հագնուած և մօրուքի վրայ ոսկեփոշի ցանած, զարմացած հարցնում է, թէ ինչո՞ւ քրիստոնէական օրէնքի համաձայն հասարակ ու համեստ չէ հագնուած: Այդ ժամանակ Օձնեցին բաց է անում իր կուրծքը և ցոյց տալիս մարմնի վրայ կրած քուրճը: Ամիրապետը տեսնելով այդ՝ շատ գոհ է մնում և պատուով ու ընծաներով ճանապարհում է:

Օձնեցու հայրապետական տարիների մի այլ գեղեցիկ և ուշագրաւ երեւոյթը հայ և ասորի եկեղեցիների սերտ կապի զաղափարի իրագործումն է: Նա ասորի և հայ հոգեւոր դասի մէջ գոյութիւն ունեցող կրօնական թիւր կարծիքները փարատելու և երկու եկեղեցիների մէջ խաղաղութիւն հաստատելու համար 726 թուին, Մանաղկերտում, ժողով է գումարում և Հայ եկեղեցու հմայքը պահում իր արժանաւոր բարձրութեան վրայ: Նրա պատմական այդ դերն արժանի է արձանագրութեան:

Երկու տարի անց, 728 թուին, Օձնեցին, 11 տարուայ կաթողիկոսութիւնից յետոյ, ընդմիջտ փակում է իր աչքերը:

Յովհան Օձնեցու կեանքի ու կրօնական գրականութեան պատկերը գծելիս արձանագրենք նաև նրա երաժշտական փայլուն ձիրքը: Նա դեռ վանական կեանքում ցուցաբերում է երաժշտական բացառիկ ընդունակութիւն և իրեն նուիրում է մենաստանի նոր սերնդի երաժշտական դաստիարակութեան գործին: Յետոյ, տարիների ընթացքում, յօրինում է մի շարք եղանակներ: Դրանք մէկը միւսից գեղեցիկ շարականներ են, որոնց մէջ ուրոյն տեղ են գրաւում՝ «Անսկիզբն Բանդ Աստուած»,

«Կանոն Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն», «Կանոն Ս. Ստեփանոսի Նախավկային», «Կանոն Որդւոցն որոտման», «Կանոն Պետրոսի և Պօղոսի զլիաւոր առաքելոցն» և ուրիշներ, որոնք արուեստագէտ և ժողովրդասէր հայրապետի անունը և յիշատակը վառ են պահում ժողովրդի սրտում:

Տրդ ԴԱՐ

5.

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԳՐԻԳՈՐ ՔԷՆԵ. ԳՈՋԻԿ

Եթէ 7րդ դարի երաժշտական արուեստի հպարտութիւնն են ականաւոր երաժշտագէտներ՝ Կոմիտաս կաթողիկոսը և Սահակ Զորափորեցին, որոնք իրենց արժէքաւոր ստեղծագործութիւններով առանձին փայլ են տուել նոյն դարի երաժշտական մշակոյթին, ապա Տրդ դարի երաժշտութեան պարծանքն են Յովհան Օձնեցին, Ստեփանոս Սիւնեցին, երաժշտահիւներ Սահակգուխտը (Սիւնեցու քոյրը) և Ռոսորովիդուխտը, որոնք իրենց գեղարուեստական գործունէութեամբ զարկ են տուել ժամանակաշրջանի երաժշտական դպրոցի զարգացմանը: Ահա նոյն դարաշրջանի երաժշտական արուեստի փայլուն և պայծառ գէմքերից մէկն է Այրի վանքի (հետագայում Գեղարդայ վանքի) միաբան Գրիգոր ք. Գուգիկը, որ Մխիթար Այրիվանեցու վկայութեամբ, ապրել է և ստեղծագործել Տրդ դարի առաջին կիսում (*):

Նրա կեանքի ու ստեղծագործութեան պատմութիւնը կազմում է հայ երաժշտական արուեստի ուշագրաւ և արժէքաւոր էջերից մէկը: Նա տոգորուած ու ներշնչուած արուեստի անսահման սիրով, ո՛չ միայն աշխատում է հայ երաժշտութեան ծաղկման համար, այլև իր ամբողջ էութեամբ նուիրում է երաժշտական նոր դպրոցի ձևակերպման և զարգացման վեհ գործին:

Նրա երաժշտական արուեստի յատկանշական գծերից մէկն աշխարհիկ բովանդակութիւնն է: Նա մէկն է իր դարաշրջանի

(*) Զ. Ղեւոնդ Ալիշանը գտնում է, որ երաժշտագէտն ապրել է մետասաներորդ դարում: Սակայն, Գրեգին կաթ. Յովսէփեանն այդ տեսակէտն անհիմն է համարում:

այն լաւագոյն երաժշտագէտներէ, որ խորագէտ գիտակցում է ժողովրդական երաժշտութեան վեհութիւնն ու հմայքը: Գրտնում է, որ պէտք է երգեր յօրինել նաև ժողովրդական արուեստով: Եւ նա հաւատարիմ մնալով ժողովրդական երգի ու ոճի առանձնայատկութիւններին, կերտում է գեղարուեստական քաղցրաւանկ երգեր: Թերևս այդ երեոյթով էլ պիտի բացատրել, որ նրա երաժշտութիւնը զեռ ևս ստեղծագործական վաղ շրջանից աչքի է ընկնում ո՛չ միայն իր յատկութեամբ, զգացմունքի անկեղծութեամբ ու նրբութեամբ, այլև ժողովրդական արուեստի երանգաւորումներով:

Սակայն, ի՞նչ են ներկայացնում Գրիգոր Գոգիկի կեանքի պատմութեան էջերը:

Հայաստանի պատմական և վաճառաշահ մայրաքաղաքի՝ Դուինի ժողովրդի հրապարտութիւնն է կազմում երաժշտագէտը, որտեղ և ստանում է իր նախնական կրթութիւնը:

Վաստակաւոր երաժշտագէտի կեանքի մասին սեղմ, բայց թանկագին տեղեկութիւններ կարդում ենք 13րդ դարի նշանաւոր հեղինակ՝ Մխիթար Այրիվանեցու պատմական և գրական արժէք ունեցող «Ստեփանոս Սիւնեցու Վկայաբանութիւն» (*) խորագրով երկում, ուր ընդգծուած են այսպիսի ուշագրաւ տողեր. «... Եւ էր ընկեր սորա (Ստեփանոս Սիւնեցու) ի նմին քաղաքի (Դուինում)՝ քհնյ. ոմն Գրիգոր անուն ի սր. ուխտէն Այրիվանաց, որ է հիմարկեալ ի սրբոյն Գրիգորէ (Հուսաւորիչ), ՚ի գլուխ ձորոյն՝ գեղաքաղաքին Գառնոյն:

Ահա այս երկու արուեստագէտները՝ Ստեփանոս Սիւնեցիի և Գրիգոր քհ. Գրեգորի, ուսման սիրով տոգորուած, Դուինից անցնում են Աթէնք, որ հանդիսանում էր իր ժամանակի գիտութեան, ուսման, երա-

ժշտական արուեստի ձեւակերպման ու դարգացման լաւագոյն մի կենտրոնը, ուր և իշխում էին դարաշրջանի գրականութեան ու գեղարուեստի ուղղութիւնները: Աթէնքի լուսաւոր միջավայրում էլ ուսումնասինչ ուսանողներն առանձին հաճոյքով լսում են համալսարանի դասախոսութիւնները՝ փիլիսոփայութիւն, կրօնագիտութիւն, պատմութիւն, երաժշտութիւն, իմաստասիրութիւն և է՛լ աւելի խորանում ուսման ու գիտութեան մէջ: Այնտեղ նրանք ճշման դամբնայն սահման փիլիսոփայութեան իմաստնոց արտաքնոց և քաջատեղեակ եղեն աստուածաշունչ մեկնչացոյ:

Նրանք Աթէնքում գրադում են նաև գրականութեամբ. յունարէնից հայերէն են թարգմանում «Յոսեթէոսի տարրական աստուածաբանութեանցն» և Նիստացու «Վասն բնութեան մարդոյ և կազմութեան կարգ» աշխատութիւնները:

Սակայն, մի հանգամանք, որ աւելի նշանակալից է, երկու ասաջաղէմ և ուշիմ ուսանողներն Աթէնքի համալսարանում փայլում են ո՛չ միայն իրենց աշխատասիրութեամբ ու ընդունակութիւններով, այլև մշակում են իրենց մէջ թագնուած երաժշտական փայլուն ձիրքերը: Մխիթար Այրիվանեցու վկայութեամբ՝ նրանք համալսարանում հանդիսանում են «յառաջագէտք ի գիտութիւն գրոց և յարուեստս երաժշտականութեան»:

Մեծ յաջողութեամբ նրանք վերջացնում են Աթէնքի համալսարանի փիլիսոփայութեան, կրօնագիտութեան, գեղարուեստի լրիւ դասընթացքը և զինուած երաժշտական արուեստի բարձր իմացութեամբ, Աթէնքից վերադառնում են Հայաստան: Դա ա՛յն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանը օր խաղաղաց, ի տաճկաց և ի յունաց՝ ասպատակութեան հետեւանքով՝ ծանր օրեր էր ապրում:

Նշենք և այն, որ Գրիգոր Գոգիկն իր գործունէութեան վայր է ընտրում Այրիվանքը, ինչպէս այդ ցոյց են տալիս Մխիթար Այրիվանեցու հետեւեալ տողերը. «Իսկ ընկեր սորա Գրիգոր քհնյ. մականունն կուչեցեալ Գոգիկ, գնացեալ ի տեղիսն իւր Այրիվանս»:

Ուշագրաւ է այն, որ պատմական վանքի միաբան Գրիգոր Գոգիկը, տարիներ

(*) Մխիթար Այրիվանեցու մատենագրական արժէքաւոր գործը «Ժամանակագրութիւնն է, որ լոյս տեսաւ 1860 թուականին Մոսկուայում: Ունի նաև բազմաթիւ Գանձեր, որոնք վկայում են նրա երաժշտական ձիրքի մասին: Նրա գրչին է պատկանում «Ճառքներ» ձեռագիրը, որի արժէքը Գարեգին Արք. Յովսէփեանը բնորոշել է այսպէս. «... Մեր գրչութեան արուեստի առաջնակարգ երեւոյթներէ մէկն է, ոչ իւր արտաքին ճոխութեամբ կամ գեղեցկութեամբ, այլ հարուստ բովանդակութեամբ»:

անխոնջ աշխատանքով, հանդիսանում է հայ երաժշտական մշակույթի լուսագոյն մի ներկայացուցիչը. վանականի պարտականություններին զուգընթաց՝ նա իր ընդհանուր հմտութիւնը և մասնագիտական գեղեցիկ յատկանիւնները նուիրում է արուեստի ստեղծագործութեան և տեսական ու մանկավարժական աշխատանքներին:

Այրիվանքումն էլ ան հանդէս է գալիս երաժշտական ասպարէզ. «Այնտեղ յառաջադէմ է հանդիսանում, — գրում է Գարեգին կաթ. Յովսէփեանը, — երաժշտական եղանակների յօրինման մէջ և երգեր է սահմանում տէրունական ու սրբոց տօներին»: Սակայն, երաժշտագէտի կեանքի պատմութեան համար աւելի կարևոր նշանակութիւն ունի այն, որ նա վանքի առաջադէմ միաբանների և ժամանակի գեղարուեստատէր հայ հասարակութեան կողմից ճանաչում է և բարձր է գնահատում ո՛չ միայն իր յօրինած եկեղեցական-հոգեւոր երգերով, այլ իր կերտած երաժշտական «քաղցրավանկ» եղանակներով:

Այդ երգերի մշակումները, որոնք բնորոշում են նրա երաժշտական արուեստի լեզուն և զարգացման գիծն ու ոգին, հանդիսանում են երաժշտագէտի ստեղծագործական ժամանակի էական յատկանիւնները: Այդ նոր եղանակներն էլ ընդգծում են, որ Գոգիկն առաջին արուեստագէտներից մէկն է, որն իր ձեռքում բարձր է պահել Տրդդարի ու Վախտանյան երաժշտութեան գրօշը: Այդ տեսակէտից նա իր արժանաւոր տեղն ունի պատմաընթացի նոր եղանակների աշխարհիկ երաժշտական արուեստի, ստեղծագործական որոնումների բնագաւառում:

Սակայն, ընդգծենք և այն, որ նրա երաժշտական այդ նոր նուաճումները, «քաղցրավանկ» եղանակները, դուր չեն գալիս դարաշրջանի պահպանողական հոգեւոր գասի մշակներին: Ահա՛ այդ մասին Մխիթար Այրիվանեցու վկայութիւնը. «Բայց յաղագս քաղցրավանկ եղանակի նորա տնկեցաւ ի նա աստ ամբարտաւանութեան»:

Գոգիկի յօրինած երաժշտական նոր եղանակները ծանր բացասական տպաւորութիւն են թողնում նաև Այրիվանքը հիւր եկած Ստեփանոս եպիսկոպոսի հոգու վրայ, որից երաժշտագէտը նոյնիսկ յանդիմանութիւն է ստանում: Այդ հանգամանքը խորապէս յուզում է Գոգիկի հոգեկան աշխարհը: Այդ օրից էլ նա խոր թախծով թողնում է վանքը և առանձնանում Այրիվանքի այրերից մէկի մէջ, ուր իր կեանքի վերջին շրջանն անց է կացնում ճգնութեամբ: Այնտեղ, քարայրի պատերի ներսում, նա ամփոփւում է ինքն իր մէջ և, հեռու վանքի միաբաններից, իր աշակերտներից ու ժողովրդից, իր «քաղցրավանկ» երգերն է երգում իր համար, մինչև իր կեանքի դժբախտ վերջալոյսը: Այդ հանգամանքն են հաստատում Մխիթար Այրիվանեցու հետեւեալ պարզ, բայց յուզիչ տողերը. «Իսկ յետ բազում ժամանակաց, շինեցաւ այլ բնակութեան նորա խորան փառացն Աստուծոյ և սեղան պատարագի»: Ահա նման տխուր վախճան է ունենում Տրդդարի առաջին կիսում ապրող և ստեղծագործող վաստակաւոր երաժշտագէտը: Ընդհատ է, որ նա յանուն արուեստի խոր լուսութեամբ տանում է ամէն տեսակ հալածանք և անտարբեր վերաբերմունք, սակայն, մինչև իր կեանքի վերջը հաւատարիմ է մնում «քաղցրավանկ» երաժշտութեան սկզբունքներին: Անժխտելի է և այն, որ նա իր նոր երգերի որոնումներով ճանապարհ է հարթում հայ աշխարհիկ-ժողովրդական երաժշտութեան արուեստի համար, որի լուսագոյն հիմնադիրներից մէկն է հանդիսանում: Նրա այդ գերն արժանի է առանձին ուշադրութեան և ջերմ գնահատութեան:

Այժմ մի հանգամանք պարզ է, որ Տրդդարի առաջին կէսի հայ երաժշտութեան զարգացման խնդրում Դրիգոր քհ. Գոգիկը նշանակալից դեր է կատարել և իր ստեղծագործութիւններով նա հնագոյն հայ երաժշտական արուեստի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաւում:

(Շարունակելի՛ 4)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ